

Հրատարակութիւն Սրբ. Օրմանեանին համակրող  
Նոր-Նախիջեանցիներէ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐԳԵՊԻՍԿՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ  
ԵՒ  
ԿԱԹՈՒԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՈՒԹԻՒՆ

ԿԵԿ ԳԱՐՇԻՆ ԱՆՏԻ. ՇԱՀԱԿԻԱՆ

Բ. տպագրութիւն

ԳՐԱՆԻ Կ. 10 ԿՈՂ.

281.69.  
0-903

Թ. Բ. Յ. Ի. Բ. Ջ.  
ՏՊԱԳՐՆԵ ԿՐԻՑ ՏՐԱՏՐԱԿՏԵՐԵՆ ԸՅԻ.  
1911

## ՅԱՆԱԶԱԲԱՆ Ա. ՏՊԱՐԴՈՒԹԵԱՆ

Երկու հանգամանք մղել են մեզ հայ հասարակութեան առաջ գնել այս գրքոյիլը: Առաջին՝ մեր խորին համոզումն է, որ Ա. Էջմիածնի ներկայ քայքայուած պահանջներէ համար ս. Օրմանանք, որպէս կարող, կրթութեամբ եւ վարչագիտ. անձնարութիւն, արժանաւորագոյն ընտրելն է կաթողիկոսական աթոռի համար: Այս համառօտ կենսագրականով փորձում ենք ծանօթացնել հայ հասարակութեան նորա բեղմնաւոր գործունէութեան հետ եւ պարզել այն թիւրեմացութիւնները, որ տարածել են նորա հակառակորդներն ու թշնամիները հասարակութեան մէջ:

Երկրորդ՝ մեզ այս գործին մղել է մեր խիղճը, որ անհրաժեշտ է զգացել արդարութեան ձայնը բարձրացնել այն գուեհիկ եւ բարբարոսական վարմունքի դէմ, որ Կ. Պոլսոյ խոստանք իւր պետերով, եւ ստիպութեան շղթաների մէջ անուած անբարոյական լրագրութիւնը ցոյց տուին հրաժարուած պատրիարքի դէմ, յաւիտենական նշաւակութեան արձան կանգնելով իրենց համար: Մերկապարանոց ստույգիւնն ու անպատկառ գրադարութիւնը այդ մարդկանց լաւագոյն զէնքն էր անացնելու եւ բոս ամենայնի վարկաբեկ անելու մի բարձրատիճան հոգեւորական, որ ծանր օրերի մէջ ցոյց տուած իւր խելօք գործունէութեան համար, այս արատութեան օրերին արժանի էր երախտագրիտութեան եւ շնորհակալութեան:

Այս գրքոյիլը գիտական բնաւորութիւն չունի, զրուած է հասարակութեան աւելի լայն խաւերի համար. այդ պատճառով էր խուսափել ենք աղբիւրներէ ցուցումներով եւ ծանօթութիւններով գիտարացնել բնթերցանութիւնը:

Դարեգին վարդ. Յովսէփեան

4 հոկտ. 1908 թ.

Ա. Էջմիածին:



ԱՄՆԱՊԱՍՏԻՒ Տ.  
ՄԱՂԱԲԻԱ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՆԱՆ  
1886 թուին.

### ՅԱՌԱՋԱԿԱՆ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Անցել է երեք տարի այս տետրակի Ա. տպագրութեան օրից, բայց տարաբաղաբար այսօր ևս նոյն շարժառիթներով ենք դիմ աւելի ինչ որ առաջ: Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի մահուամբ թափուր է հայրապետական աթոռը և մեր առաջ է դրուած գործակալ Ս. Լուսաւորչի արժանաւոր յաջորդի ընտրութեան հրատապ հարցը. միւս կողմից Ս. Օրմանեանի երբեք թշնամիները չեն գաղտնի նորանոր անուանաբարութիւններով, սպառնալիքներով խոչնդոտ հանդիսանալու նորա ընտրուելու հնարութեան:

Անչուչտ այս ժամանակի ընթացքում պարզուել են շատ խնդիրներ, վրաբարութիւններ, որոնք զէնք էին ծառայել անխիղճ մտրդկանց ձեռքին արատաւորելու Ս. Օրմանեանի անձնաւորութիւնը, պատասաւել է նրանց երեսին ձգուած ստութեան քօղը... բայց «սակին սաղոմն ինչ կանի, իսկին խրատն ինչ» նրանք նոր միջոցներ կը դիմեն հասարակութեան մտրդեցնելու և իրենց նպատակին հասնելու համար: Երատական է կարգալ: Կ. Պօլսոյ Ազգային ժողովի կողմից կարգուած Գննիչ Յանձնաժողովի տեղեկագիրը, տեսնելու համար, թէ ստութեան բարոյական մերկութեան ինչպիսի սոսկալի հերոսներ են եղած սորա ամբաստանիչներն ու հակառակորդները: Մինչդեռ Ս. Օրմանեանի իրար յաջորդող զետական աշխատութիւնների շարքը և հերոսական լուսթիւնը կատարուած անլուր մեքենայութիւնների և անարդարութիւնների դէմ պայծառ: ապացոյցներ են նորա դէպի գործն ունեցած անսպառ եռանդի և հողու մեծութեան:

Երկրորդ տպագրութեան մէջ դրբոյկիս ընդհանուր բնաւորութիւնն ու բովանդակութիւնը նոյնն է, ինչ որ առաջին տպագրութեան մէջ: Միքանի մասեր կարելի էր փոփոխութեան ենթարկել կամ հանել, բայց որպէս մօտաւոր տխուր անցեալի մի լուսաբանութիւն և կենդանի նահատակութեան մի

## ՅԱՌԱՋԱՐԱՆ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Անցել է երեք տարի այս տետրանիկի Ա. տպագրութեան օրից, բայց տպագրողարար այսօր ևս նոյն շարժառիթներով ենք զբիչ առել, ինչ որ առաջ՝ Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի մահուամբ թափուր է հայրապետական աթոռը և մեր առաջ է գրուած գաղձեալ Ս. Լուսաւորչի արժանաւոր յաջորդի ընտրութեան հրատապ հարցը. միւս կողմից Ս. Օրմանեանի երբուեալ թշնամիները չեն դադարել նորանոր անուանաբերութիւններով սպառնալիքներով խոչնդատ հանդիսանալու նորա ընտրուելու հնարութեան:

Անչուչտ այս ժամանակի ընթացքում պարզուել են շատ խնդիրներ, զբարարաութիւններ, որոնք զէնք էին ծառայել անխիղճ մարդկանց ձեռքին արատաւորելու Ս. Օրմանեանի անհնարութիւնը, պատասուել է նրանց երեսին ձգուած ստութեան քօղը... բայց «սին սապնն ինչ կանի, իսին խրատն ինչ» նրանք նոր միջոցների կը դիմեն հասարակութեան մտորեցնելու և իրենց նպատակին հասնելու համար: Որտասական է կարդալ: Կ. Պօլսոյ Ազգային ժողովի կողմից կարգուած Գննիչ Յանձնաժողովի տեղեկագիրը, տեսնելու համար, թէ ստութեան բարոյական մերկութեան ինչպիսի սոսկալի հերոսներ են եղած սորա ամբաստանիչներն ու հակառակորդները: Մինչդեռ Ս. Օրմանեանի իրար յաջորդող գիտական աշխատութիւնների շարքը և հերոսական լուսթիւնը կատարուած անլուր մեքենայութիւնների և անարդարութիւնների դէմ պայծառ: Երկուսն էր նորա դէպի գործն ունեցած անսպառ եռանդի և հոգու մեծութեան:

Երկուրդ տպագրութեան մէջ գրքոյկիս ընդհանուր ընտրութիւնն ու բովանդակութիւնը նոյնն է, ինչ որ առաջին տպագրութեան մէջ: Մէքանի մասեր կարելի էր փոփոխութեան ենթարկել կամ հանել, բայց որպէս մօտաւոր տխուր անցեալի մի լուսարանութիւն և կենդանի նահատակութեան մի

նոր վկայարանութիւն, պահում ենք նոյնութեամբ: Հովառու  
կորդները անցեալ տխուր շահատակութիւնները թող ապացոյց  
լինեն որակերու և նրանց նոր արշաւանքները, որոնց միակ  
նպատակն է հասարակութեան մոլորութեան մէջ պահել: Սրբ-  
բազրութիւններն ու յանդուհանդիւրը կատարել ենք ոչ մեծ ծա-  
ւալով, դժբոյժը շատ չստուարացներու և ընթերցանութիւնը  
գիւրամաստչելի պահելու համար:

Գարեգին վարդ. Յովսէփեան

4 օգոստ. 1911 թ.  
թիֆլիզ:

## ՄԱՂԱԿԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՕՐԲԱՆԵԱՆ ԵՒ ՂԱԹՈՂԻ- ԿՈՍՏԱԿԱՆ ԸՆՏՏՈՒԹԻՒՆ

### Ա.

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրբանեան՝ Կ. Պօլսոյ Նրա-  
ծարուած պատրիարքը ծնել է 1841 թուին փետր. 11-ին Կ.  
Պօլսի Բերա թարում: Նորա ծնողները կաթողիկէ էին: Նախնա-  
կան կրթութիւնը տանը և տեղական դպրոցներում ստանալուց  
լետոյ ուղարկուած է ստանամբայ հասակում 1851 թ. Հռոմ  
(Անտոնեանց վանքում չարունակելու իւր ուսումը: Ուշիմ պա-  
տանին այստեղ մեծ յաջողութեամբ 1858 թուին աւարտեց իւր  
միջնակարգ ուսումը, սովորելով հայերէնի հետ իտալերէն, լա-  
տիներէն և գաղղիերէն լեզուները: Ապա արեղայական օրն-  
նութիւն ստանալով (առանց քանոնայական ձեռնարկութեան)  
մտաւ Ս. Ապոլինարի սեմինարը կամ բարձրագոյն դպրոցը,  
ուր 1860 թուին փիլիսոփայութեան դոքտորի քննութիւն  
տուաւ: Այնուհետև մինչև 1865 թիւը (յունիսի 8-ը (Ն. տու-  
մար) նա աստուածաբանութիւն ուսաւ և աստուածաբանու-  
թեան դոքտորի աստիճան ստացաւ atto pubblico կոչումով  
հրապարակային և մեծ-ահանդէս վիճարանական քննութեամբ:  
Ընդունակ արեղան այս երիտասարդական հասակում արդէն  
հմուտ աստուածաբանի հուշակ էր ստացել և 1863 թուին մըր-  
ցանակներ: Նոյն թուին Հ. Եղուարդ Արքեպիսկոպոս Հիւր-  
միւլեանի ձեռքով նախ սարկաւազ և ապա օգոստոսի 12-ին  
քահանայ ձեռնադրուեցաւ իբրև Անտոնեանց միաբանութեան  
անդամ: Բայց իբրև արեղայ եւ նա չարունակեց իւր գիտնական  
աշխատանքները և 1868 թ. օրէնսդրութեան դոքտորի աս-  
տիճան ստացաւ: Այս հակիրճ տեղեկութիւնները ցոյց են տա-

վիս, թէ ինչպիսի բաղձակողմանի և գիտնական պատրաստութիւն և զարգացում ունի Ս. Օրմանեանը. նա ոչ միայն հիմնադրապէս ծանօթ է մեր հին և նոր գրականութեան պատմութեան, այլ և ինչպէս մայրենի լեզուով կարող է խօսել ֆրանսերէն, իտալերէն, քաջ գիտէ լատիներէն, խօսում է տաճկերէն, անգլեակ է մասամբ և գերմաներէն լեզուին:

Բ.

Այսպիսի լուրջ պատրաստութեամբ 1866 թուինց արդէն նա մտնում է հասարակական գործունէութեան մէջ: Նորա առաջին, հասարակական գործունէութիւնը կապուած է ազգային մի կարևոր խնդրի հետ, թէև հայ կաթողիկ համայնքի մէջ ամփոփուած: 1866—1870 թ.թ. սկսուած է Հասունեան և Հակասասունեան վէճը, որ այնքան նշանաւոր հանդիսացաւ կաթողիկ Հայոց պատմութեան մէջ: Այս վէճը թէև սկզբում մասնաւոր բնաւորութիւն ունէր և Հասունի անձնական, իշխանափրական հակումները մեծ դեր էին խաղում, բայց շուտով նա ազգային մի խնդիր է դառնում: Հասունը յենուած էր հուսով վրայ. նա ոչ միայն պաշտպանում էր անօրինակամտութեան գաղափարը, այլ և զո՞նում հայ կաթողիկ եկեղեցւոյ ազգայնութեան և անկախութեան մնացորդները: Կաթողիկ պրոպագանդան, որ կարողացել էր երկպառակութիւն ձգել արևմտեան Հայոց մէջ և սպառել ժէ. ժէ. և ժժ. դարերում մեր ժողովրդի և եկեղեցւոյ լաւագոյն սրբերը, այժմ յանձին Հասունի և նորա կողմնակիցների կամենում էր կրճատել հայ կաթողիկ եկեղեցին, ոչնչացնելով ներքին անկախութեան և ազգայնութեան տարրերը: Հասունի անձնական ոտնձգութիւնների դէմ էին և ազգայնութեան պաշտպան Հակասասունեաները:

Ահա այս խնդրի մէջ է հանդէս գալիս Օրմանեանը առաջին անգամ իբրև հասարակական գործիչ. նա հակահասունեան, այսինքն՝ ազգային ուղղութեան գլխաւոր ներկայացուցիչներից մէկն էր և կարելի է ասել ոգին: Մարաքէի վարդապետ Օրմանեան իբրև խորհրդական աստուածաբան և քարաուղար՝ Անտոնեան միաբանութեան կողմից ներկայ էր 1869 թ. յուլիսի

5-ին այս վէճի առթիւ գումարուած եկեղեցական ժողովին. նա եռանդուն կերպով մասնակից էր նոյնպէս այդ մասին կազմուած յանձնաժողովների գործունէութեան: Անտոնեանը, որ միխթարականների հետ, ազգային ուղղութեան պաշտպաններն էին Հասունեան վէճերի ժամանակ, Հոռոմից ներգրելով ասորւոյեան Պօլիս փոխարուել 1870 թ., թողնելով իրենց վանքը, դպրոցն ու կալուածները: Միխթարեանը միայն անհատաբար էին մասնակցում այս խնդրին. նորա էլ յետ կացան, երբ վատիկանի պաշտպանութեամբ Հասունը յաղթող հանդիսացաւ: Ըր տարի յետոյ Անտոնեանը Մարաքէի վարդապետ Օրմանեանին Հուսում ուղարկեցին կրօնց կալուածական իրաւունքն ու վանքը պահպանելու, ուր մնաց մինչև 1876 թ.:

Այս ժամանակ նա հրատարակեց այս վէճի հետ կապ ունեցող իւր հետեւեալ աշխատութիւնները ա) Gli Armeni cattolici orientali Constantinopoli 1870. 80 էր. 117. բ) H. Reversurus, ovvero la Tarchia ed il papato, Rome, 1872. 80. գ) Les droits civils et la libert  religieuse des Catholiques d'Orient 1872 Rome դ) Le Vatican et les Armeniens 1873 Rome. Այս աշխատութիւնների մէջ հեղինակը Հասունեանց դէմ առարկելով՝ պաշտպանում է արևելեան կաթողիկ եկեղեցիների անկախութեան գաղափարը ընդդէմ պապի թեոկրատա կոնդակի: Մարաքէի վարդապետ ամենից աւելի զօրաւոր կերպով արժարժում և քննութեան նիւթ է դարձնում այս խնդիրը իւր վերջին աշխատութեան մէջ: Պ. Արչակ Չօպանեանը այդ գրուածքը բնորոշում է որպէս «լայն և ամուր հմտութեամբ, յստակ ու ջղուտ արամաբանութեամբ և յանդուգն ու պայքարող ոճով գործ, որ բանասիրուական որդրոջն էր բարձրանայ, պատմական լուրջ աշխատութեան մը պատկանելի գրքն ունի: Ահա մի փոքրիկ հասուած, որ շատ բնորոշ է հեղինակի հայեացքների և ուղղութեան վերաբերութեամբ. «իբր (արևելեան եկեղեցին) պատրիարքներն ու եպիսկոպոսները՝ իրենց առաքելական իրաւունքներովը զօրաւոր, իբր բովանդակ կղերը, աշխարհականներու հոգեւոր մասնակցութեամբը հպարտ, եր հաստատայեալները՝ իրենց կրօնական անկեղծութեան մէջ փառաւոր, ոչ անտարբեր, ոչ մոլիւսանդ, ասանք են սիրտու-

ները որ թոյլ կուտան Արեւելքի եկեղեցւոյն ինքզինքը Արեւմուտքի եկեղեցին ստորադրու չընկառանջ\*): Ընդգծուած տողերը մասնաւոր յայտարար են նորա ազգային ուղիւղութեան նոյնիսկ կաթողիկ եղած ժամանակը: Մարգարէա վարդապետ 1876 թ. Հռոմից Պօլիս դառնալով՝ դարձեալ եւսանձառն կերպով շարունակուած է իւր պայքարը Հակահատուեանց դէմ՝ այժմ արդէն իբրև Անտոնեանց միաբանութեան տնօրէն ժողովոյ անդամ կամ «խնամատար»: Այս պաշտօնը նա շարունակեց մինչև 1879 թ. հոկտ. 29-ը, երբ 40 անձանց հետ մտնեցն էլ յայտնի ընտանիքներէց՝ դարձաւ Հայոց առաքելական եկեղեցւոյ գլխաւոր հետեւելով այն հարուստներին, որ վարդապետ էր նորա մէջ այս ամբողջ վէճի ընթացքում:

Գ.

Օրմանեանցին և իւր համախոհներին ընդունեց երջանկաբնուտակ ներսէս պատրիարք (վարժապետեանը հետեւեալ խօսքերով. «Օտարին պաշտուածը հիւր էիք, ձեր իրաճիւն տէլը եղաք»:

Եւ իբրև Օրմանեան դեռ ևս Հայոց եկեղեցւոյ գլխաւոր չմտած արդէն յայտնի էր իւր ազգային ուղիւղութեամբ: Ներսէս Պատրիարքի վտանգութեան և գնահատութեան հաւաստիք կարող է լինել այն հանգամանքը, որ նա հէնց նոյն օրը նորաբարձ վարդապետին ծալլապարունութեան աստիճան է տալիս, նշանակելով Ղալաթիայի Ս. Լուսաւորէի եկեղեցւո. քարոզիչ: Նոյն պատրիարքի կարգադրութեամբ վարել է նա ազգային մատենագրութեան տեսչութեան, վիճակագրական յանձնաժողովի անդամակցութեան պաշտօնները և գործակցել Ազգային խնդրի մէջ: Իբրև քարոզիչ առհասարակ Ս. Օրմանեանը մեր եկեղեցական հոգեւորների փայլուն ներկայացուցիչներէց մէկն է: Բաղժակողմանի ծանօթութեան հետ միացած է նորա մէջ քարոզչական ընտարտը տաղանդը: Նորա տուած քարոզչութիւնը մինչև այժմ 2000-ից աւելի է, իսկ այդ հուշակը

\*) Մ վրտիչ Պէշիկիթաշիեանի կեանքն ու գրութ. փարիկ, 1908. էր. 195  
 \*\*) Անդ էր. 196

նա սկսել է ստանալ Ղալաթիայի եկեղեցւում իւր վեցամսեայ քարոզչութեան ժամանակից: Նա բանախօսութիւններ է արել նաև ազգային խնդրի շուրջը՝ մեծ համակրութիւն վայելելով ունեկիրներէց: Այդ բանախօսութիւնները սպառնում են առանձին տարաբնուրով ևս. ա) «Հայուն անցեալը, ներկայն և ապագայն» 1879, Մասիսի մէջ, բ) «Հայութեան հոգին 160 էր. 39: գ) «Միութիւն Հայութեան» 160 էր. 50. դ) «Հայ ազգութիւն» 160, էր. 59: ե) «Հայ երիտասարդութիւն 160, էր. 66 զ) «Վարտ եմք» 80, էր. 23 վերնագիրներով: Հէնց միայն քարոզչական և բանախօսական այսպիսի ընդարձակ գործունէութիւնը գնահատութեան արժանի մի կեանք է, բայց նորա անասնան եւսանդն ու ընդունակութիւնը աւելի բազմակողմանի արդիւնք է ունեցել իւր հովուական, ուսուցչական, գիտական և պատրիարքական գործունէութեամբ:

Նորագործ վարդապետն արդէն 1880 թ. այնքան հուշակ ու համակրութիւն ունէր, որ կարծոյ հայաչափ և կարևոր թեմի առաջնորդ ընտրուեցաւ: Այդ պաշտօնը նա կատարեց ամենայն յաջողութեամբ եօթը տարի շարունակ, զարկ տալով ազգային զգացման բարձրացման և զարոցների կարգաւորութեանը: Այս շրջանից յետի է մի դէպք, որ շատ բնորոշ է նորա ազգային ուղիւղութեան և հաւատարիմ ու խելահաս ծառայութեան: Օրմանեանցը միակ առաջնորդն էր տանկաւոյց մէջ, որ հասկացաւ, թէ Ռուսաստանի վշտին դպրոցները փակ ման առթիւ վշտակից պիտի լինի և տանկաւոյց, միևնորէ ժամանակ և իրախոյս՝ պաշտպանելու եկեղեցւոյ դարևար իրաւունքները: Նա մի ցոյց կազմակերպեց և յատուկ քարոզիչութեանց այդ մասին: Նորա գործունէութիւնը կարճուած ազգային և կրթական տեսակետով կասկած յարուցեց տանկաւոյց կառավարութեան կողմից և եւսանդուն առաջնորդն ստիպուած էր առժամանակ ընդհատել իւր գործունէութիւնն այնտեղ և կառավարութեան պահանջով Պօլիս փոխադրուել, ուր Շիշլիի փառաւոր գերեզմանատան ծաղիման պատճառը դարձաւ, միևնորէն ժամանակ ամեն կիրառիլ քարոզչելով Բերայի եկեղեցւոյնը: Այս ժողովրդասէր և արդիւնաւոր գործունէութեան հետևանքն էր, որ հօտը գնահատեց նրան և խնդրեց եպիսկոպ

իւր վանքը պայծառացնել և ուսման կեդրոն դարձնել: Մաղաքիս եպիսկոպոսի վերադարձն էջմիածնից նորա համար մի գիւտ էր: Տաճկահայերը չունէին իրենց հոգեւոր ճեմարանը: որտեղ եկեղեցւոյ պաշտօնեաներ պիտի պատրաստուէին ժամանակի պահանջները համեմատ: Տաճկահայոց հոգեւորականները մեծ մասը Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցը սաներ էին կամ պատահական կրթութիւն ստացած մարդիկ: Բնական է, որ հոգեւորականութեան դարգացման մակերևոյթը այդպիսի պատմանները մէջ բարձր լինել էլէր կարող իսկ հին չափով կրթութիւնը անբարւոյտար էր հօտի բազմակողմանի պահանջներին: Եկեղեցին իւր դաստիարակչական և քաղաքակրթական դերը կատարել կարող է միայն այն ժամանակ, երբ իւր կոչումն ըմբռնող և մտքերն ու զգացումները դիկավարելու բնորոշակի պաշտօնեաներ ունի: Աւանց կենդանի, գիտութեամբ օտուտ, իւր կոչման դադարներով սպրող պաշտօնեանութեան անհնարին է եկեղեցւոյ հոգեւոր բովանդակութիւնը պահել, վերանորոգել, հօտի համար միս ու արիւն դարձնել: Ուստի համար մեր ազգային-հոգեւոր վերակենդանութիւնը, նա չպէտք է անտես անէ այս էական հարցը: Ի դուր է դրական արդիւնք յուսու եկեղեցական վարչութեան, դպրոցների և կալուածների բարեկարգութեան նկատմամբ, մինչև գիտութեան և կոչման գաղափարներով գինուած պաշտօնեանութիւն չունենանք: Այս հարցը էական է թէ մեր և թէ տաճկահայոց համար: Ս. Օրմանեան այն սակաւաթիւ անհատները մէկն էր, որ լաւ բնութեւ էր այս խնդիրը և պատրաստ էր իւր բոլոր կարողութիւնը նուիրել նորա յաջող լուծման: Նա Ս. Աշքրեանին առաջարկեց իւր ծառայութիւնը Արմաշուտ դպրեվանք հաստատելու և այդ դրածը դեկավարելու: Պատրիարքը սիրով բնորոշեց նորա առաջարկութիւնը և նշանակեց նրան փոխ վանահայր և դպրոցի տեսուչ: Վանահայրը համարուում էր պատրիարքը, որ իբրև նախագահ խնամակալութեան պէտք է աշխատէր նպատակ տնտեսական կարիքներին: 1889 թուին սկսուեց Ս. Օրմանեանի վանահայրական և տեսչական գործունէութիւնը Արմաշուտ, որ եօթը տարի տեւեց և այնքան օգտակար եղաւ տաճկահայոց հա-

պրտացնել, որ և կատարուեց 1886 թ. Մակար կաթողիկոսի ձեռքով:

Դ.

Եպիսկոպոսութիւնից յետոյ սկսուած է գործունէութեան մի նոր շրջան: Մակար կաթողիկոսի կողմից 1887/8 ուսումնական տարին նա նրաւիրուած է ձեռնարանի ատուածարանական առարկաների դասատու: Տարաբարգարք մի տարի միայն տեւեց նորա գործունէութիւնն էջմիածնում, բայց թողեց շատ դրամի տպաւորութիւն: Այն ծրագիրը, որ ունէր հանդուցեալ նաճապետ եպիսկոպոսը իբրև տեսուչ իւր գործակից Սեդրաք Մանգիլեանի և կարապետ Կոստանեանի հետ, — Ս. Աթուի ձեռնարանը բարձրագոյն դպրոց դարձնել և ազգային հոգևոր կրթուած նոր միաբանութիւն կազմել — մեծ գործ ստացաւ Օրմանեանի ներկայութեամբ: Նորա հմտութիւնը գիտութեան մէջ, նորա գեղեցիկ քարոզները, խրատները, աշակերտների համար, աշխտի, կենդանի բնաւորութիւնը անտանձն երանդի և ամբողջութեան հետ, հմտել էին աշակերտութեան մեծագոյն մասը: Այստեղ նա «Երգարատ»-ում տպեց նաև իւր «Հայոց հայրազնտական աթուր» աշխատութիւնը, որ ապա հրատարակուեցաւ և առանձին դրքովով: Այդ աշխատութիւնը գրել էր դեռ ևս կարնոյ առաջնորդութեան ժամանակ և ներկայացրել Տ. Մակար կաթողիկոսին իբրև վարդապետական նուէր: Ինչպիսի ասացինք մի տարի միայն տեւեց նորա ուսուցչութիւնը ձեմարանում, ուստաց կառավարութիւնը կաթողիկոսից պահանջեց նեւացնել նորան, առարկելով, որ օտարահպատակը չէ կարող պաշտօն վարել ձեմարանում:

Ս. Օրմանեան իւր վարժապետական գործունէութիւնը աւելի երանգով և մեծ չափերով շարունակեց Արմաշի դպրեվանքում: Արմաշի վանքը, որ գտնուում է Նիկիտիկոյ մօտ, բաւական կարեւոր դեր է կատարել տաճկահայոց եկեղեցական կեանքի մէջ: Աշքրեանը այդ վանքի վանահայրութիւնից պատրիարքութեան կոչուեցաւ, նորա գլխատող հոգեւորից մէկն էր

մար: նույն օգնականն էր ուսումնական մասում Եղիշէ վարդապետ Գուրեան, որ յետոյ նորա յաջորդը դարձաւ իբրև դպրեվանքի տեսուչ և պատրիարք: Ս. Օրմանեանի շնորհիւ Տաճկաստանն այժմ երկտասարգ, կրթուած հոգեւորականներէ մի ստուար խումբ ունի, որոնք առաջնորդական, քարոզչական պաշտօններ են կատարում, անուն են հանել արդէն բանասիրական, հրապարակաստական և դպրոցական գործունէութեամբ: Թուել այդ վարդապետների անունները, նորանց վարած պաշտօնները, գրատր աշխատութիւններն ու լրագրներին ցոյց տուած կենդանի աշխատակցութիւնը, լուսադոյն վկայականը կը լինէր Ս. Օրմանեանի վարժապետական դաստիարակ գործունէութեան հայց այդ անկարող ենք անել տեղի շահանքի մէջ: Չնչին, մանր անձնաւորութիւններ, անընդունակ բնութեւն կատարող գործը իւր ամբողջութեամբ քննադատ են հանդիսանում մանկամանուկութիւնների, լուսոյ փոխարէն միայն նորա արձակած ստուերն են տեսնում և իրենց ուժերը լարում խեղճելու նորաբողոք կեանքը: Ս. Օրմանեանի գործունէութիւնն ևս այս կողմից քննութեան և կազմածի է ենթարկուել. անանք արմաշական վարդապետներին չափազանց ազատամիտ են համարել և հայոց եկեղեցւոյ գոյութեան համար վտանգաւոր, ոմանք բնիհակառակ Օրմանեանցին կրկերական և կաթողիկ հոգին Հայոց մէջ պատուաստելու պատճառ բնորոշել: Զջմարտութիւնը այս երկու հակադրութիւնների մէջ տեղն է: Ս. Օրմանեանն ոգևորուել է Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ նոր պաշտօնէութիւն պատրաստելու գաղափարով և այս նորա համար լուսոյ պրակ պիտի համարել, որ կոյրերի համար տեսանելի չէ: Բայց Արմաշը ոչ միայն վարդապետացուներ է պատրաստել, այլև քանանաներ և ուսուցիչներ: Արմաշի, ինչպէս և այստեղ Մ. Աթուռի ճեմարանի էական կոչումը պիտի համարել հոգեւորականներ պատրաստելու հրատապ

խնդիրը: Կարունակուել այդ գործը, որ այստեղ է սկսել է հանգուցեալ Նահապետ եպիսկոպոսը և Տաճկաստանում Ս. Օրմանեան, չգիտեմ թէ քնն կրթիչ Հայոց եկեղեցւոյ ապագան: Մեր հարեան նեստորականների, Յակոբիկների և արևելեան ուրիշ մանր եկեղեցիների օրինակը կենդանի ապացոյց է, թէ քնն է նշանակում եկեղեցի՝ տգէտ, քառարթ մէջ խարխափող հոգեւորականութեամբ: «Թէէ աղն անհամի, բւ յաղիցի»:

Ե.

Ինչպէս ասացինք, Ս. Օրմանեանի վարժապետական գործունէութիւնն Արմաշում եօթը տարի տևեց: Նոյեմբերի 6-ին 1896 թ. նա Կ. Պոլսոյ պատրիարք բնաբուհեցաւ, որ վարեց այդ պաշտօնը մինչև 1908 թուականի յուլիսի 16-ը՝ մօտ 12 տարի:

Տարրական ճամարտութիւն է, որ պատմական երևոյթները պէտք է դատուին և հասկացուին տեղի և ժամանակի պայմանների համաձայն: Երևոյթն ինքնընտրութեան անհասկանալի է, մինչև չլուսարանուին կապ ունեցող հանգամանքները: Միացեալ նահանգների կամ Անգլիայի մէջ էլիտոյ հայեացքներով կշռել Պարսկաստանում կամ Զինաստանում պատանող դէպքերը, նշանակում է հակացողութիւն չունենալ պատմութիւնն ու կեանքն բմբունելու: Այսպէս և Ս. Օրմանեանի պատրիարքութիւնը գնահատելու համար երբէք չպէտք է մոռանա՞ք այն *բացարձկ* և *մանր ժամանակը*, երբ նա կոչուած էր հոգևորու տաճկահայ ժողովուրդը:

1896 թուերին կատարուել էր Հայոց մեծ կոտորածը. պատմութեան մէջ չտեսնուած և չլուսած մի դէպք էր այդ: Մեծ պատերազմներն այնպէս աղետաբեր չեն լինում պետութիւնների համար, ինչպէս այդ կոտորածը հայ ժողովրդի համար եղաւ: Մայրաքաղաքից սկսած բոլոր հայաբնակ քաղաքներն ու գիւղերը պածուութեան էին ենթարկուել կամ աւարաուսութեան: Սուլթան Համիդը կատաղած էր, և այդ կատաղութեան մէջ նա կամենում էր ոչնչացնել հայ տարրը, դուրա հետ լուծելով և հայիական խնդիրը, որ այնքան գլխացաւանք էր

